THE INFLUENCE OF FAMILY EDUCATION TYPES ON THE FORMATION OF CHILDREN'S ANXIETY AND AGGRESSION

Arakelyan A.D., Karapetyan A. S. (Armenian State Pedagogical University after Kh. Abovyan, Yerevan, Armenia)
araqelyananna23@aspu.am, alisa.karapetyan@bk.ru
Ներկայացման ամս. 26.07.2021
Գրախոսման ամս. 10.08.2021
Տպագրության ընդունման ամս. 16.08.2021

The article discusses the issues of anxiety and aggression, the relationship between types of family education.The article presents the results of a research conducted with primary school children and their parents.The results of the correlation between the types of family education, anxiety and aggression are presented, the peculiarities of the relationship are analyzed. According to the results of the research, over-care, harsh upbringing, change of types of education, cinderella types and authoritative style influence on the anxiety of a primery school children. Rigid education, changes in education typesandovercare influence on the aggressiveness of primary school children.

Keywords: *Type of family education, family education style, anxiety, aggression, parent-child relationship.*

DOI: https://doi.org/10.46991/SBMP/2021.4.2.027

Հաշվի առնելով ծնողների կողմից երեխաների տագնապայնության և ագրեսիվության ցուցանիշների մասին հաճախակի բարձրաձայնումը, մասնագիտական օգնության և աջակցության դիմելու հայցերի բովանդակությունը՝ կարող ենք արձանագրել, որ և՛ տեսական, և՛ պրակտիկ առումներով երեխաների ագրեսիվ վարքի և տագնապայնության ձևավորման գործոնների ուսումնասիրության, շտկման համարժեք մեթոդական համակարգի ստեղծման հարցերը վերջնականապես լուծված չեն և ակտուալ են: Մասնագիտական գրականության մեջ ագրեսիվության և տագնապայնության ձևավորման տարբեր գործոններ և պատճառներ են առանձնացված, որոնցից մեկն էլ ընտանեկան դաստիարակության տիպը կամ ոճն է: Վերջիններիս ազդեցության վերաբերյալ առկա են տարբեր տեսական և փորձարարական հետազոտություններ, որոնք հիմնականում կատարված են նախադպրոցական տարիքի երեխաների հետ: Ընտանեկան դաստիարակության տիպը կամ ոճը սահմանվում է՝ որպես ընտանիքում երեխայի հետ հարաբերությունների ոճ, որը բնութագրվում է խնամքի, վերահսկողության աստիճանի և ծնող-երեխա հուզական հարաբերությունների բնույթով (Ա.Լ. Վենգեր, Ջեյմս Մարտին Բոլուդին, Ա. Ի. Զախարով) [4]:

Երեխա-ծնող հարաբերությունները երեխաների մոտ տագնապայնության ձևավորման հիմնական գործոններից մեկն են: Ըստ Գ.Ս. Աբրամովայի՝ որոշ իրավիճակներում հենց ծնողներն են նպաստում երեխայի մոտ տագնապայնության զարգացմանը [2, էջ 79] և տագնապային երեխա դաստիարակելու հավանականությունը մեծ է, երբ ծնողների կողմից կիրառվում է ավելորդ խնամք, մեծ թվով սահմանափակումներ և արգելքներ: Այս դեպքում երեխա-մեծահասակ շփումն ավտորիտար բնույթ ունի, ինչի հետևանքով երեխան կորցնում է իր և իր ունակությունների հանդեպ վստահությունը, անընդհատ վախենում է բացասական գնահատումից, սկսում է անհանգստանալ, որ նա ինչ-որ բան սխալ է անում, ունենում է անհանգստության զգացում, որը կարող է վերաճել կայուն անձնային կազմավորման՝ տագնապայնության: Ըստ Օ.Վ. Լասկավայի՝ դաստիարակության ավտորիտար, լիբերալ և անտարբեր ոճերը նպաստում են կրտսեր դպրոցականների տագնապայնության ձևավորմանը, ընդ որում դաստիարակության լիբերալ ոճի դեպքում ձևավորվում է նաև եսասիրություն և որևէ արգելքով չսահմանափակված ազատ վարք, իսկ անտարբեր ոճի դեպքում՝ ծնողների կողմից երեխայի կյանքի և զարգացման վերաբերյալ հետաքրքրության պակասը նրան դարձնում է միայնակ, երեխան դպրոցում նաև դժվարանում է իր հասակակիցների հետ հարաբերություններ հաստատել: Դաստիարակության դեմոկրատական ոճի դեպքում կրտսեր դպրոցականների տագնապայնությունը կարող է աստիճանաբար նվազել [5, էջ 260]: Ընտանեկան դաստիարակության առանձնահատկությունները (ընտանիքի ներսում հարաբերությունների բնույթը, բարեկեցության մակարդակը և ընտանեկան դաստիարակության ոճը) նպաստում են նաև ընտանիքում երեխայի ագրեսիվ վարքի դրսևորմանը: Երեխաների մոտ ագրեսիվության ձևավորումը հիմնականում ծնողների հոգեբանորեն անբարենպաստ վերաբերմունքի, դրա դրսևորումների հետևանք է [7, էջ 146]: Ըստ Լ. Բերկովիցի՝ երեխաների նկատմամբ խիստ պատիժների կիրառումը, չափազանց վերահսկողությունը (գերխնամք) կամ ընդհակառակը՝ վերահսկողության խիստ պակասը կամ բացակայությունը հաճախ հանգեցնում են երեխաների ագրեսիվության մակարդակի բարձրացմանը [3, էջ 130]:

Մեր հետազոտության նպատակն է եղել ուսումնասիրել դաստիարակության տիպերի ազդեցությունը կրտսեր դպրոցականների տագնապայնության և ագրեսիվության ձևավորման վրա: Ենթադրվել է, որ կրտսեր դպրոցականի տագնապայնության և ագրեսիվության դրսևորումները պայմանավորվում են նաև դաստիարակության տիպերի ու ոճերի արտահայտվածությամբ: Հետազոտությանը մասնակցել են Ծովինարի Ա. Խաչատրյանի անվան միջնակարգ դպրոցի 7-8 տարեկան 40 երեխաներ և նրանց ծնողներ (մայրիկներ): Երեխաների հետ կիրառվել է Ֆիլիպսի «Դպրոցականի տագնապայնության մակարդակի գնահատում» թեստը [1, էջ 244-251], իսկ ծնողների հետ կիրառվել են Գ.Պ. Լավրենտևայի և Տ.Մ. Տիտարենկոյի «Երեխայի տագնապայնության

գնահատման ցուցանիշներ», «Երեխայի ագրեսիվության գնահատման ցուցանիշներ» հարցարանները [6], «Երեխաների դաստիարակության տիպերը»՝ հարցաշար ծնողների համար [1, էջ 274-281], «Ընտանեկան դաստիարակության ոճեր» (Ս. Ստեփանովա) մեթոդիկան [8, էջ 46-51]: Երեխաների հետ իրականացրած «Դպրոցականի տագնապայնության մակարդակի գնահատում» թեստի արդյունքների միջինացված ցուցանիշների վերլուծությամբ պարզ է դարձել, որ խմբային ամենաբարձր ցուցանիշներն արձանագրվել են շրջապատողների սպասելիքներին չհամապատասխանելու վախի (60), հաջողության հասնելու պահանջմունքի ֆրուստրացիայի (55.4), խնդիրներ և վախեր ուսուցիչների հետ հարաբերություններում (46.9) գործոնների դեպքում:

«Երեխայի տագնապայնության գնահատման ցուցանիշներ» հարցարանի տվյալների համաձայն՝ 40 հետազոտվողներից 50%-ի մոտ գրանցվել է տագնապայնության ցածր մակարդակ, 45 %-ի միջին մակարդակ, իսկ 5%-ի մոտ՝ բարձր մակարդակ: Ծնողների հետ իրականացրած «Երեխայի ագրեսիվության գնահատման ցուցանիշներ» հարցարանի արդյունքների վերլուծությունից պարզ դարձավ, որ 40 հետազոտվողներից 35 %-ի մոտ գրանցվել է ագրեսիվության ցածր, 60%-ի մոտ՝ միջին և 5%-ի մոտ՝ բարձր մակարդակներ: Ծնողների հետ իրականացրած «Երեխաների դաստիարակության տիպերը» մեթոդիկայի արդյունքների միջինացված ցուցանիշների վերլուծությամբ պարզ է դարձել, որ փորձարարական ընտրակազմում արտահայտվածության բարձր մակարդակ արձանագրվել է գերխնամք, ընտանիքի կուռք, հիվանդության պաշտամունք, բարձր բարոյական պատասխանատվություն տիպերի դեպքում, իսկ ցածր արտահայտվածություն՝ թերխնամք, խնամակալությունից զուրկ, մոխրոտիկ, կոշտ դաստիարակություն, արքայազն, հակասական դաստիարակություն, դաստիարակության տիպերի փոփոխում սանդղակներում: «Ընտանեկան դաստիարակության ոճեր» մեթոդիկայի արդյունքների միջինացված ցուցանիշների վերլուծությամբ պարզ է դարձել, որ ծնողների կողմից առավել հաճախ կիրառվում են դաստիարակության հեղինակավոր և ավտորիտար ոճերը, իսկ սակավ կիրառվողներն են՝ լիբերալ և անտարբեր ոճերը: Դաստիարակության տիպերի և ոճերի ազդեցությունը երեխաների տագնապայնության և ագրեսիվության ձևավորման վրա ուսումնասիրելու նպատակով կատարվել է կարգային համահարաբերակցային վերլուծություն, որի արդյունքում առանձնացվել և վերլուծվել են հուսալի և հավաստի հարաբերակցային կապերը:

Տագնապայնության և դաստիարակության գերխնամք տիպի ցուցանիշների միջև բացահայտվել է նշանակալի դրական հարաբերակցային կապ ($r=0.337$, $p\leq0.05$), ինչը վկայում է, որ տագնապայնության բարձր մակարդակը պայմանավորվում է նաև դաստիարակության գերխնամք տիպի բարձր արտահայտվածությամբ, իսկ տագնապայնության ցածր մակարդակի դեպքում արտահայտվածության ցածր մակարդակ է գրանցվել դաստիարակության գերխնամք տիպի ցուցանիշներում: Երբ ծնողները խիստ վերահսկում են

երեխային, նրա առջև դնում են տարբեր սահմանափակումներ, արգելքներ, այն նպաստում է երեխայի ինքնուրույնության նախաձեռնողականության բացակայությանը, անվճռականության և իրեն պաշտպանելու անկարողության, ինչն էլ իր հերթին հանգեցնում է երեխաների մոտ տագնապայնության մակարդակի բարձրացմանը: Գերխնամքի հետևանքով երեխայի մոտ չի ձևավորվում անհրաժեշտ սթրեսակայունությունը և դժվարություններին դիմակայելու կարողությունը:

Օրինաչափորեն բացասական հարաբերակցային կապ է բացահայտվել տագնապայնության և դաստիարակության թերխնամք տիպի ցուցանիշների միջև ($r=-0.251$, $p\leq0.05$): Վերջինս նշանակում է, որ որքան ծնողների կողմից երեխայի նկատմամբ վերահսկողության աստիճանը ցածր է, երեխայի կյանքում ներառվածություն չկա, երեխայի նկատմամբ արգելքներ և սահմանափակումներ չկան, այնքան երեխան նախաձեռնող և կոնֆորմ է լինում, որի արդյունքում երեխան ունենում է տագնապայնության ավելի ցածր մակարդակ:

Նշանակալի դրական հարաբերակցային կապ է բացահայտվել դաստիարակության «մոխրոտիկ» տիպի ցուցանիշների և տագնապայնության միջև ($r=0.320$, $p\leq0.05$): Նման կապի առկայությունը ենթադրում է, որ տագնապայնության բարձր մակարդակը պայմանավորվում է նաև դաստիարակության «մոխրոտիկ» տիպի բարձր արտահայտվածությամբ, և հակառակը՝ տագնապայնության ցածր մակարդակը հարաբերվում է դաստիարակության «մոխրոտիկ» տիպի ցածր ցուցանիշների հետ: Վերջինս մեկնաբանվում է այն հանգամանքով, որ երբ երեխայի նկատմամբ ծնողների վերաբերմունքներում առկա է հուզական մերժվածություն, սառնություն, անտարբերություն, երեխան շատ զգայուն է լինում անհաջողությունների նկատմամբ, անվստահ, կարող է չարանալ և օտարանալ: Արդյունքում երեխան իրեն չսիրված է զգում, անհանգստանում և ընկճվում է, երբ ընտանիքի անդամներից մեկին ավելի շատ են սիրում:

Նշանակալի դրական հարաբերակցային կապ է ($r=0.426$, $p\leq0.01$) բացահայտվել տագնապայնության և կոշտ դաստիարակության ցուցանիշների միջև: Վերջինս վկայում է, որ տագնապայնության բարձր մակարդակը պայմանավորվում է նաև կոշտ դաստիարակության տիպի բարձր արտահայտվածությամբ, և հակառակը՝ տագնապայնության ցածր մակարդակը հարաբերվում է կոշտ դաստիարակության տիպի ցածր ցուցանիշների հետ:Նման կապի առկայությունը ցույց է տալիս, որ երբ ծնողը երեխայի կարծիքը հաշվի չի առնում, չնչին հանցանքի համար նրան խիստ պատժում է, երեխան մեծանում է վտանգի սպասման և անհանգստության բարձր մակարդակի պայմաններում: Տագնապայնության և դաստիարակության տիպերի փոփոխում սանդղակի ցուցանիշների միջև արձանագրված դրական կապը ($r=0.421$, $p\leq0.01$) վկայում է, որ տագնապայնության բարձր մակարդակը պայմանավորվում է նաև դաստիարակության տիպերի փոփոխում տիպի բարձր արտահայտվածությամբ,

իսկ տագնապայնության ցածր մակարդակը հարաբերվում է դաստիարակության տիպերի փոփոխում սանդղակի ցածր ցուցանիշների հետ: Նման կապի առկայությունը պետք է մեկնաբանել այն հանգամանքով, որ դաստիարակության նկատմամբ ծնողների տարբեր մոտեցումների դեպքում երեխան չի կարողանում հասկանալ իրեն ներկայացվող պահանջների էությունը, «կարելիների» և «չի կարելիների» սահմանը: Երբ ընտանիքում ծնողները ուշադրություն են դարձնում միայն փոքր երեխային՝ փոխելով մեծի հանդեպ դաստիարակման մեթոդները, երեխան հասկանում է, որ այլևս ընտանիքի կուռքը չէ:

Տագնապայնության և հեղինակավոր ոճի ցուցանիշների միջև արձանագրված բացասական կապը ($r=-0.312$, $p\leq0.05$) վկայում է, որ տագնապայնության բարձր մակարդակը պայմանավորվում է նաև դաստիարակության հեղինակավոր ոճի ցածր արտահայտվածությամբ: Սա նշանակում է, որ որքան ծնողները երեխայի նկատմամբ դրսևորում են ջերմ վերաբերմունք, օբյեկտիվորեն են քննարկում նրա ցանկությունները, խրախուսում են նրա ինքնուրույնությունը, ինքնավստահությունը, կայացնում են որոշումներ, որոնք երեխայի համար կամայական և անարդար չեն, նրան ներգրավում են ընտանեկան խնդիրների քննարկմանը, այնքան երեխան սոցիալապես ավելի ադապտացված է լինում, ունենում է ինքնավստահության և ինքնակառավարման բարձր մակարդակ:

Ագրեսիվության և կոշտ դաստիարակության ցուցանիշների միջև արձանագրված դրական հարաբերակցային կապը ($r=0.367$, $p\leq0.05$) վկայում է, որ ագրեսիվության բարձր մակարդակը պայմանավորվում է նաև կոշտ դաստիարակության տիպի բարձր արտահայտվածությամբ, և հակառակը՝ ագրեսիվության ցածր մակարդակը հարաբերվում է կոշտ դաստիարակության տիպի ցածր ցուցանիշների հետ: Որքան ծնողները երեխային խիստ են պատժում իր կատարած արարքի համար, այնքան երեխան ավելի ագրեսիվ, կամակոր է դառնում՝ ցածրացած ինքնագնահատականով: Երբ ծնողները երեխային ագրեսիա դրսևորելու համար պարբերաբար պատժում են, և նա ժամանակի ընթացքում սովորում է ծնողների ներկայությամբ թաքցնել իր զայրույթը, դա ամենևին չի նշանակում, որ այլ իրավիճակներում ևս նա կզսպի իր ագրեսիան:

Ագրեսիվության և դաստիարակության տիպերի փոփոխում սանդղակի ցուցանիշների միջև արձանագրված դրական կապի ($r=0.481$, $p\leq0.01$) առկայությունը վկայում է, որ ագրեսիվության բարձր մակարդակը պայմանավորվում է նաև դաստիարակության տիպերի փոփոխում տիպի բարձր արտահայտվածությամբ: Երբ ծնողները սկսում են քիչ ուշադրություն դարձնել իրենց մեծ երեխային՝ փոխելով նրա նկատմամբ վերաբերմունքները, երեխան սկսում է անհանգստանալ, որ նա այլևս ծնողների սիրելին չէ, դառնում է ավելի դյուրագրգիռ, ագրեսիվ, չի համակերպվում այն մտքի հետ, որ տան կուռքը ուրիշն է: Նշանակալի դրական հարաբերակցային կապ է արձանագրվել երեխաների ագրեսիվության և դաստիարակության գերխնամք տիպի ցուցանիշների միջև

($r=0.312$, $p\leq0.05$): Վերջինս վկայում է, որ ագրեսիվության բարձր մակարդակը պայմանավորվում է նաև դաստիարակության գերխնամք տիպի բարձր արտահայտվածությամբ, և հակառակը՝ ագրեսիվության ցածր մակարդակը հարաբերվում է դաստիարակության գերխնամք տիպի ցածր ցուցանիշների հետ: Այս կապը բացատրվում է այն հանգամանքով, որ երբ ծնողները մեծ վերահսկողություն են ցուցաբերում երեխայի նկատմամբ, սահմանափակում են նրա ազատությունը, առկա են արգելքներ ու խիստ հրահանգներ, երեխան դառնում է չնախաձեռնող, վախկոտ, անվստահ, ունենում է ցածր ինքնագնահատական: Այս դեպքում երեխայի մեջ նաև կուտակվում է զայրույթ, վիրավորանք և ըմբոստություն այն բանի համար, որ իրեն ամեն ինչ արգելված է, իսկ ուրիշներին «ամեն ինչ կարելի է», արդյունքում երեխայի վարքում դրսևորվում են նեգատիվիզմ, կամակորություն, նյարդայնություն, զայրույթ:

Ինչպես նկատում ենք, հարաբերակցային նույնատիպ կապեր են արձանագրվել տագնապայնության, ագրեսիվության ու դաստիարակության տիպերի ցուցանիշների միջև: Վերջինս կարելի է բացատրել այն հանգամանքով, որ տագնապայնության և ագրեսիվության ցուցանիշների միջև բացահայտվել է ուժեղ հարաբերակցային կապ ($r=0.754$, $p\leq0.001$), ինչը նշանակում է, որ տագնապայնության և ագրեսիվության ցուցանիշների միջև կա փոխկապվածություն. տագնապայնության բարձր ցուցանիշները հարաբերակցվել են ագրեսիվության բարձր, իսկ տագնապայնության ցածր ցուցանիշները՝ ագրեսիվության ցածր ցուցանիշների հետ:

Այսպիսով՝ հետազոտության տվյալների հարաբերակացային կապերի հոգեբանական վերլուծության արդյունքում պարզվել է, որ.

1. Կրտսեր դպրոցականների տագնապայնության և ագրեսիվության ցուցանիշների միջև առկա է փոխկախվածություն. տագնապայնության բարձր մակարդակը հարաբերակցվում է ագրեսիվության բարձր մակարդակի հետ, տագնապայնության ցածր մակարդակը՝ ագրեսիվության ցածր մակարդակի հետ:
2. Կրտսեր դպրոցականների տագնապայնության բարձր մակարդակը պայմանավորվում է նաև գերխնամք, կոշտ դաստիարակություն, դաստիարակության տիպերի փոփոխում, մոխրոտիկ տիպերի բարձր արտահայտվածությամբ, ինչպես նաև թերխնամք տիպի ու հեղինակավոր ոճի ցածր արտահայտվածությամբ:
3. Կրտսեր դպրոցականների ագրեսիվության բարձր մակարդակը պայմանավորվում է նաև կոշտ դաստիարակություն, դաստիարակության տիպերի փոփոխում, գերխնամք տիպերի բարձր արտահայտվածությամբ:

Գրականություն

1. **Թունյան Ջ., Երիցյան L.** Կրտսեր դպրոցականի հոգեբանություն, Ուսումնամեթոդական ձեռնարկ/ՀՀ ԿԳՆ: Գորիսի պետ. Համալսարան: Եր.: Էնվե Փրինթ, 2013, 288 էջ:
2. **Абрамова Г.С.** Возрастная психология / Г.С. Абрамова. М.: Академический Проект, 2011, 585 с.
3. **Берковиц Л.** Агрессия: причины, последствия и контроль. СПб.: Прайм-ЕВРОЗНАК, 2001.- 195с.
4. **Кузьмишина Т.Л., Амелина Е.С., Пермякова А.А., Хохлова Е.А.** Современная зарубежная психология. № 1/2014, Стили семейного воспитания: отечественная и зарубежная классификация.
5. **Ласкавая О.В.** Влияние стидя воспитания в семье на возникновение тревожности младшего школьника. Педагогика и психология: актуальные вопросы теории и практики: материалы IV Междунар. науч.-практ. конф. (Чебоксары, 22 мая 2015 г.) / ред.кол.: О. Н. Широков [и др.]. – Чебоксары: ЦНС «Интерактив плюс», 2015 – 296 с.
6. **Лаврентьева Г.П., Титаренко Т.М.** Методическое пособие. 1992.
7. **Тремаскина Е.В., Разбежкина Е.П.** К проблеме агрессивного поведения детей мдадшего школьного возраста. Вестник магистратуры. 2016. № 5(56). Т. II.158с.
8. **Трофимова Е.В., Хахлова О.Н.** Успешное замещающее родительство: книга для приемных родителей/ Авторы-составители: –Уфа, 2015. –200с.

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՏԻՊԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՏԱԳՆԱՊԱՅՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԳՐԵՍԻՎՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՎՐԱ

Առաքելյան Ա.Դ., Կարապետյան Ա. Ս. (Խ. Աբովյանի անվ. Հայկական պետական մանկավարժական համալսարան, Երևան, Հայաստան)

Հոդվածում քննարկվում են ընտանեկան դաստիարակության տիպերի, տագնապայնության ու ագրեսիվության ձևավորման փոխկապվածության հարցերը: Ներկայացված են կրտսեր դպրոցական տարիքի երեխաների և նրանց ծնողների հետ իրականացրած հետազոտության արդյունքները, ինչպես նաև՝ ընտանեկան դաստիարակության տիպերի և երեխաների տագնապայնության ու ագրեսիվության ցուցանիշների համահարաբերակցման արդյունքները, վերլուծված են փոխհարաբերության դրսևորման առանձնահատկությունները: Հետազոտության արդյունքներով պարզ է դարձել, որ կրտսեր

դպրոցական տարիքի երեխաների մոտ տագնապայնության դրսևորումները պայմանավորվում են նաև գերխնամք, կոշտ դաստիարակություն, դաստիարակության տիպերի փոփոխում, մոխրոտիկ տիպերի և հեղինակավոր ոճի արտահայտվածությամբ, իսկ ագրեսիվության դրսևորումների վրա իրենց ազդեցությունն են ունենում կոշտ դաստիարակություն, դաստիարակության տիպերի փոփոխում և գերխնամք տիպերը:

Հանգուցային բառեր՝ *ընտանեկան դաստիարակության տիպ, ընտանեկան դաստիարակության ոճ, տագնապայնություն, ագրեսիվություն, ծնող-երեխա փոխհարաբերություններ:*

ВЛИЯНИЕ ТИПОВ СЕМЕЙНОГО ВОСПИТАНИЯ НА ФОРМИРОВАНИЕ ТРЕВОЖНОСТИ И АГРЕССИВНОСТИ ДЕТЕЙ

Аракелян А. Д., Карапетян А. С. (Армянский государственный педагогический университет им" Х. Абовяна, Ереван, Армения)

В статье рассматриваются вопросы взаимосвязи типов семейного воспитания и формирования тревожности и агрессивности. В статье представлены результаты исследования с детьми младшего школьного возраста и их родителями. Представлены результаты корреляции типов семейного воспитания с тревожности и агрессивности детей, проанализированы особенности проявления взаимоотношений. Согласно результатам исследования, чрезмерная забота, смена типов воспитания, жесткое воспитание, семейное воспитание по типу Золушки и авторитарный стиль родителей влияют на проявление тревожности у младших школьников. Жесткое воспитание, смена типов воспитания и чрезмерная забота также влияют на формирование агрессивности младших школьников.

Ключевые слова: *тип семейного воспитания, стиль семейного воспитания, тревожность, агрессивность, детско-родительские отношения.*